ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ գլխավոր դատախազության մասնաշենքի վերակառույցի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔՊԿ-ՀԲՄԱՇՁԲ-17/1 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի դեկտեմբերի 19-ին կնքված N ՀՀՔՊԿ-ՀԲՄԱՇՁԲ-17/1 պայմանագրում 2018 թվականի փետրվարի 23-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	Կապալառուի կողմից ներկայացրած գրություն և պատասխանատու ստորաբաժանման առաջարկություն:
Փոփոխության նկարագրություն	ՀՀ գլխավոր դատախազության մասնաշենքի վերակառույցի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կնքված N ՀՀՔՊԿ-ՀԲՄԱՇՁԲ-17/1 պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետների փոփոխություն:
Փոփոխության հիմնավորում	N ՀՀՔՊԿ-ՀԲՄԱՇՁԲ-17/1 պայմանագրի 8.5 և 8.6 կետեր:

Պատվիրատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

19.12.2017 թ. կնքված N ՀՀՔՊԿ-ՀԲՄԱՇՁԲ-17/1 պետական գնման պայմանագրի

ք. Երևան **23 փետրվարի 2018 թ.**

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի (այսուհետ՝ Պատվիրատու), որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Մնացականյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով Կողմերի միջև 2017 թվականի դեկտեմբերի 19-ին կնքված ՀՀ գլխավոր դատախազության մասնաշենքի վերակառույցի վերակառուցման աշխատանքների կատարման N ՀՀՔՊԿ-ՀԲՄԱՇՁԲ-17/1 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.6 կետերով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին.

1.1.1 Պայմանագրի հավելված N 2-ով սահմանված օրացուցային գրաֆիկի.

ա) 2-րդ տողում <<25.02.2018թ.>> բառերը փոխարինել <<26.03.2018թ.>> բառերով,

բ) 3-րդ տողում <<15.04.2018թ.>> բառերը փոխարինել <<14.05.2018թ.>> բառերով,

գ) 4-րդ տողում <<25.04.2018թ.>> բառերը փոխարինել <<24.05.2018թ.>> բառերով:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	**Կապալառու**
ՀՀ կառավարությանն առընթեր	<<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ
քաղաքաշինության պետական կոմիտե	ք. Գավառ, Անդրանիկի 5
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
կառավարական տուն 3	Հ/Հ 1150014871111107
ՀՀ ֆինանսների նախարարության	ՀՎՀՀ 08404037
աշխատակազմի գործառնական վարչություն	
Հ/Հ 900011015972	
ՀՎՀՀ 02565827	
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Հ. Մնացականյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.